

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարից համար

ճարեկան ֆր. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

ճարեկան ֆր. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք ԵՏԵՆ

տրութիւն 25.1

8-9 v

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք «Հայելի»-ին մէջ աղյուս երեւնալ,

Պատրիք սիրուն եւ սգնիւ դէմք մը ունենա՛մ:

ՏԵՂԱԿԱՆ



ՊՈՒՎԱՐԻՈՅ ԵՂԵՒՄՈՒՏԲԸ

ՍՕՑԻԱ. — Պաշտօնաթերթը կը հըրատարակէ Ն. Ա. Բարձրութեան ֆէրտինանտ Իշխանին մէկ գիրը, որով զօհունակութիւն կը յայտնէ նախարարութեան ըրած ջանքերուն համար՝ ներքին միջոցներով դարձան մը ընելու երկրին ելմտական տագնապին:

Ն. Արքայական Բարձրութիւնը ուղերթ ինքն ալ մասնակցիլ այն խնայողական միջոցներուն որոնց ձեռնարկուած է երկրին ելմտական կացութեան հետեանքով, իր անձնական տարեթոշակին կէսը պարգեւեց կառավարութեան գանձին:

ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԳ. — Պատիւ ունիմ ծանուցանել տեղւոյս մէջ բնակութիւն հաստատող մեր յարգոյ գաղթական ազգայնոց որ իրենք ևս այսուհետե տեղւոյս ազգայնոց նման իրաւունք ունին քուէարկու-

թեան մասնակցելու. ուստի կը հրաւրեմ ամեն գաղթական ազգայնները, որ բարեհաճին գալ իրենց անունները արձանագրել տալու տեղւոյս ազգայնոց ընտրողական ցանկին մէջ:

Մ. Տէր Մարտիրոս Մարտիրոսեան



— Երուսաղէմէն կը գրեն թէ 1900ի յունեմարին Հայէջիստանի Մէնէրիք Թագաւորը Երուսաղէմ պիտի այցելէ, ուր իր լիաւոր կատարելէ ու պատմական վայրերը պատելէ ետքը Պոլիս ալ հանդիպելով պետի ուղեորի Եւրոպա, ներկայ գտնուելու համար Բարիլի 1900ի մեծ ծուցահանդէսին:

— Մանկատի հայ նուագածուի մը անունը կը յիշուի ուստի թերթերուն մէջ: Այդ ութ տարեկան տղան, Մ. Խուցեան, որ կը նուագէ թաւջութակի (պիօրօնսէն) վրայ, այս միջոցիս Բեդերսպուրկ կը գտնուի ուր գացեր է Կարսէն: Ձեռնհաս անձերու կարծիքով, կը գրէ Մուկուայի Նով. Դնեա թերթը, փոքրիկ զիօլէնսիլիսթը կանխահաս տաղանդ մը ցոյց կուտայ և յաջողապէս կը վարէ իր երաժշտական խոշոր գործիքը:



ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐ

ՀԻԱՆԴԱՆՈՅԻ ՄԻԿԱՐԻ ԹՈՒՂԹԸ

Ազգ. Հիւանդանոցի սիկարի թուղթըն երբեմն կանոնաւոր հասոյթի միջոց եղած էր: Ետքերն ինկաւ, որովհետեւ թղթին տեսակն աւրելով, քիչ մը աւելի շահիլ ուզեց պայմանագիր վաճառականը: Միախտի կամ սիկարի թուղթի մէջազ չունենալով հանդերձ, երբ քանիցս յիշեցուցինք թէ թղթին տեսակէն գանգատողներ կան, ոմանք կարծեցին թէ յիշեալ պայմանագիրին հետ գործ մ'ունինք: Բանն այնպէս չէր, ինչպէս նիւթական արդիւնքէն ալ երեւցաւ: Նոր Հոգաբարձութիւնը, գործին էութիւնն հասկցած ըլլալով. հիմա տարբեր կարգադրութիւն մը կ'ընէ: Այսուհետեւ սիկարի թուղթն ընկերովի պիտի շահագործուի, դրամադրին մէկ մասն Հոգաբարձութիւնը տալով, մէկ մասն ալ վաճառականներու խմբակ մը, և սիկարի թուղթը պիտի պատրաստուի Հիւանդանոցին շէնքին մէջ խակ. ուր այս առթիւ Որբանոցի քանի մը տղաք ալ արհեստ պիտի սովորին: Այս կերպիւ Հոգաբարձութիւնն ապահով պիտի ըլլայ թէ թուղթին տեսակը պիտի չփոխուի: Հոգաբարձութիւնն իբրեւ ընկեր շահելէ զատ, իր պանտրօլի բաժինն ըստ առաջնոյն պիտի առնուի: Հոգաբարձութեան կնիքը կրող ամէն տուփերէն:

Բիւզանդիոն

— Տ. Երեւում քահանայ, որ այժմ Ռուսնուց կը գտնուի, Կրօն. Ժողովէն հրաման խնդրած էր Ժամանակ մը եւս մնալ ի Ռուսնուց. մինչև որ կարենայ իր հայրենիքը վերադառնալու համար հարկ եղած դրամն հայթայթել: Ժողովն

իր նախապէս տուած որոշումը հաստատ պահելով, որոշեց յանձնարարել Ռուսնուքի եկեղեցւոյն քահանային որ աղաքարարէ յիշեալ Տ. Երեւումի ընդ փոյթ դառնալ իր հայրենիքը, հակառակ պարագային պիտի դադրի քահանայագործելէ:

— Բագուի առաջնակարգ հայ վաճառականներէն Արաֆէլեան եղբայրները Ռուսիոյ բարձրագոյն իշխանութենէն թոյլտուութիւն ստացելու են «նաւթար. թիւնաբերական-առետրական» ընկերութիւն մը հիմնելու, մէկ միլիոն ռուսլի դրամադրուելով, 2000 բաժնեւթուղթի բաժնուած: Նորահաստատ ընկերութեան կեդրոնատեղին պիտի ըլլայ Բագու:

Շարժումի Սօժիսայի քղթակցիկն

Եթէ Հայաստանի սրբափայտները քիւրտերու հօտերու և տափարներու աղբանոց դարձած է, արտասահմանի մէջ գտնուած հայ սրբափայտներն ալ ձեզ նման հայհոյիչ իժներու և անհաւատներու խաղաղիկ դարձնելու է:

«Հայելի» յիշեցուց թէ եկեղեցական օրինաց հակառակ էր Տաճարին մէջ ֆօթօկրաֆ մը ի ցոյց դնելը, ինչպէս ըրին ի Ֆիլիպէ. դուք կուղէիք Սօֆիաի մէջ ալ այդ բանը ընել տալ. բայց չի յաջողելնուդ համար կրակ կտրած էք: Քիչ մը ջուր խմեցէք որ պաղշկիք:

ՆԱՄԱԿ Ի ՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԽՕՍՔԻՆ, ԿԱՐՃԸ

«Ստորագրեալս որ 1860էն մինչև 1896 անընդհատ Պոլսոյ բոլոր թատերաբեմերուն վրայ գտնուած եւս յուշարարի պաշտօնով,

տեսած կամ լսած չեմ՝ Գալֆան Պօղոս
անունով գերասան մը որ թատերաբեմի մը
վրայ երևցած ըլլայ:

99 Նոյ. 2

Յուշարար

Վառնա

ՏԻԴՐԱՆ ԳԱԼԷՄՃԵԱՆ

(Յուսարի է որ այս չէզոք վկայութիւնը
պիտի գոհացնէ երկու կողմի ընդդիմախօսնե-
րը, որոնք ալ եւս կը վերջացնեն գլխու ցաւ
պատճառող քարոզներն):

ՅԱՆԿ ԳՐՈՅ

Հետեւեալ գրքերը ամեն օր հրա-
տարակուելով ձրիաբար կը բաժնուին.

Բամբասագիրք. — Բաղմահատոր
մատեն մը, հեղինակութեամբ տիկին-
ներու. ձրի կը բաժնուի կանանց վեր-
նատուններուն մէջ:

Պատմութիւն պատերազմին կա-
նանց. — Հեղինակ հարսեր ու կէսուր-
ներ:

Տիեզերական ոտախօսութիւն. —
Լրագրաց թղթակիցներէ յօրինուած:

Ընտիր ասացուածք. — Բեռնակիր-
ներու և սայլապաններու հեղինակու-
թեամբ:

Ընդարձակ ճարտասանութիւն հա-
մոզեցուցիչ. — Երկասիրութիւն փաս-
տաբանաց:

Շրջան լրագիր ստութեանց. — Սըր-
ճարաններու ու գինետուններու մէջ տը-
պագրուած: Ձրի ընթերցում և ձրի
ունկնդրութիւն:



ՀԱՐՑ—ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ամուսնացեալ կին մը ինչի՞ կը նմանի.

— Տիրոջը յանձնուած նամակի:

Օրիորդ մը.

— Գրուած բայց տակաւին տիրոջը

չի յանձնուած նամակի:

— Առանց ամուսնանալու ծերացած
կիներ ինչի՞ կը նմանի.

— Նամակատան մէջ մոռցուած նա-
մակի:

Ի՞նչ է դրամօժիտը.

— Անցագին մը, զոր օրիորդները
կը վճարեն ամուսնութեան աշխարհը
ճամլորդելու առթիւ:

Ի՞նչ է սիրտը.

— Թռչուն մը որ շատ տեղեր կը
թռչտի բայց քիչ տեղ կը թառի:

Ի՞նչ է սէրը.

— Ժամանակին ամենէն քշուկ ապ-
րանքը, որոյ վաճառականք դժբաղդա-
բար միշտ սնանկանալու վտանգին են-
թակայ են:

Ի՞նչ է ամուսնութիւնը.

— Եթէ երկու բնաւորութիւնք իրա-
րու յարմարին՝ արքայութեան նախա-
գաւթն է, իսկ եթէ չի յարմարին՝ դը-
ժոյքի հալիք:

ՓԼ ԻԻԹ



ՓԱՓԱՃԱՇԱՀԱԿՆԵՐՈՒՆ

Յատկապէս խնամօք պատրաստուած ըն-
տիր երչիկ եւ ապուխտ. կը ծախուի Վառ-
նա Մուսալլա, Տ. Ռափայէլ Գարագաշեանի
նպարեղինաց վաճառատունը: Գին գոհացու-
ցիչ: Քաղաքներէ ու արտասահմանէ եկած
յանձնարարութիւնք ալ փութով կը կատար-
ուին:

ՏԻԴՐԱՆ ԹԻԻՖԷՆԵՃԵԱՆԻ

ՍԱԼՈՆ ՍԱՆԹՐԱԼ

Մուսալլա

Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանու-
ցանել արգոյ հասարակութեան, թէ պէտք
եղած ատենը հարսնիքներու եւ խնճոյքներու
համար Սալոնը վարձու կը տրուի:

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք



Տիկին Հիրշի թողած ժառանգութիւնը. — Պարոնուհի Հիրշի ժառանգորդները այդ ահագին ժառանգութենէն տէրութեան քանձին ստանալիք իրաւունքները վճարեցին:

Կալուածական փոխանցման և այլ տուրքերն որ տէրութեան ելեմտական պաշտօնէութիւնն ստացաւ այս առթիւ, 12 միլիոն ֆրանքի պատկառելի գումարին կը հասնի: Այդ գումարը վճարեր են ոչ թէ դրամատան մը կամ դրամատուններու վրայ չէք մը կամ մէկ քանի չէքեր քաշելով, այլ Ֆրանսայի դրամատան թղթադրամներով, որոնք հաշուելով մէկիկ մէկիկ շարեր են սեղանին վրայ:

Եթէ ոսկիով վճարուեր այս 12 միլիոն ֆրանքի գումարը՝ 3,876 բիլիոն պիտի կշռէր, գրեթէ չոգեկալքի մը ծանրուցքը, եւ զայն կառքէ մը կամ քանի մը կառքերէ հանելով մինչեւ գանձային անտուկը տանելու համար 77 մարդոց պէտք կըլլար, ամեն մէկը 50 բիլիոն տանելով:

Պատասխանի ծագումը. — Մարդ կը զարմանայ այսօր երբ մտածէ թէ առօրեայ գործածութեան ամենէ կարեւոր առարկաներն երկարատեւ անժամօթ մնացած են: Օրինակի աղագաւ պատառաքաղն, որու գործածութիւնը տասնեօթներորդ դարուն սովորական եղաւ մեր մէջ, այն ատենուան փափկակերի մը, դուքս տը Մօնթօլիէի շնորհիւ՝ որ իբր լաւ ճաշակի տիպար, անուն հանած էր:

Սակայն պատառաքաղը շատոնց ի վեր հնարուած էր, և իբր բացառիկ գրեթէ հետաքրքրական սպաս մը կը զարգարէր սեղանը՝ մի միայն պտուղ և կարկանդակ ուտելու համար: Պատառաքաղը Բիւզանդիոնի արքունեաց մէջ կը գործածուէր, ուստի վենետիկի Տօմերն ալ առին ժԸ դարուն սկիզբները: ԺԴ. դարուն միայն ֆրանսայի արքունեաց

արծաթեզինաց ցուցակին մէջ կ'երևի: 1328ին Լուի Ժ-ի կնոջ մահուանէ վերջը այս ցուցակին մէջ միայն 30 դպալ և մէկ պատառաքաղ նշանակուած է:

Անկէ քանի մը տարի առաջ Անգլիոյ մէջ Էտուար Բ.ի մտերիմներէն մին չափաւանց պերճասէր հաշակուած էր «սաննո մսէրու հաւաք» երեք պատառաքաղ ունենալուն առթիւ: ԺԶ. դարուն սկիզբները միայն պատառաքաղի գործածութիւնը սովորական եղած է, ան ալ շատանք ըսելու թէ միայն ազնուականներն և հարուստ գասակարգը կը գործածէր: Գրեթէ միւսոյն ատենն ալ Բուրնիա և Ռուսիա մտաւ: ԺԷ. դարուն Պապը պատառաքաղին գործածութիւնն արտօնեց վանքերուն համար:

Այսօր ալ պատառաքաղը կը գործածուի միայն Եւրոպա, Եւրոպական սերունդ և Եւրոպայի հետ յարաբերութիւն ունեցող ազգաց մէջ: Չինացիներէն զատ որք ուտելու համար իրենց մասնաւոր ցպիկներն ունին, միւս բոլոր ազգերը մասնորով կ'ուտեն դեռ:

Ծ Ի Ծ Ա Ղ



Հանգանակ դրամահաւատոյ, սահմանեալ 'ի ծխափաճառ Գամիւնոսէ ունեմնէ Անկեղոյ, մականուամբն անհաւատ մամէլէձի կոչեցելոյ:

Հաւատամ 'ի հայրն աշխարհակալ, տընորինոյն ամենայն իրաց երկրի, երեւելեաց և աներեւութից. և ի մի տէր ոսկի և արծաթ ծնեալն 'ի միտաղաց, այսինքն յեւթենէ հողոյ, որով ամենայն ինչ լինի ի վերայ երկրի:

Ար յաղագս մեր մարդկան և վասն մերոյ հանգստութեան և խռովութեան ի բովս մօրեալ հալեցաւ, կռանեցաւ և դրոշմեցաւ ի պատկեր արքունական, որով էառ մարմին տուպլինի, բրիմիձի, մաճառի, նաբօլէոնի ճշմարտագէտ և ոչ կարծեօք:

Չարչարեալ ի ներքոյ կռանաց և յըզ-
կեալ ՚ի ձեռն արհեստաւորաց բաղում՝ քը-
գամբ և քրտամբ, ապա փոխադրեալ նստաւ
ի յաթոռ արքունական. եւ յետ ժամանա-
կաց ելեալ ՚ի գանձարանէն շրջեցաւ և շրջի
ի վերայ երկրի մեծաւ փառօք և համբաւօք:

Ար հիմէ ուր և հնչեցէ պառաշինսն
իւր, անդ պապանձին լեղոք անկուտիւտը,
եւ որոյ թագաւորութիւնն ոչ քոյ ՚ի վերայ
երկրի վախճան:

Հաւատամ ՚ի սորին հրաշալի մետաղի
քիւրիւնէն բլխեալ յոսկիսն անդիգայականս,
զբանը հինգնոցն, զըստանպոլն, զմարլըն,
ըզֆնտըզըն, զտանսերկուկնոցսն և զչարկելի
աստեղափայլ Ուսուպիէականսն, որք զօրացու-
ցանն զսիրտս ստացողաց:

Հաւատամ ՚ի պէս պէս տեսակս ար-
ծաթեայ զրամոց, մէթալիկս, յիրիւրս, կար
պոլանս, սվանձիքս եւ ամենայն մանր մու-
նըր փողս որք ժուռ գան յարաժամ ի գըր-
պանս եւ ՚ի քէսէս ամենայն անհատից, ՚ի
զիրութիւն ատելտրից, ՚ի վայելումն ժամա-
նակից մինչեւ ՚ի կեանս յաւիտենականս:

Իսկ որք ասենն էր երբեմն յորժամ ոչ
էր նա յարգի, կամ էր երբեմն յորժամ ոչ
էր նա ինթիպարի, կամ թէ յոչէից եղեն
կամ յայլմէ էութենէ ամենայն իրք աշխար-
հիս, զայնպիսին նզովէ ակնցի Դամիանոս ծը-
խաւաճառ, մականուանեալն անհաւատ եւ
մամէլէճի:

Ք. Մ. Զ.

Նափութեան

ՆՈՒԱԳՐԱԿԱՆ

Աժանս Բոթոթիկ եւ Ընկ.

Պ—Զ

Դ... Կուսակցութեան 28 անուակ մեծար-
ժէք գոյքերը որ անոր ասոր ձեռքով պագալ-
ներու չափաւորութեան ծախուելով գրամներն ալ
«գաբանըն էլինտէ գալմըշ» եղեր էր, այս
անգամ անոնց պարապ անուակները կոտրու-
ուելով չուրան նետուեցան, անշուշտ այս մեծ

վեղծումն հետքը ոչնչացնելու համար:

Հալոյր ոսկիէ աւելի արժէք ունեցող այդ
գոյքերուն աւանդապահ կարգուած աննշան
խուստուտածի բարչասին ալ եւխլը կապած,
անարգել կորսուեցաւ գնաց:

Բոթ.— Ուրիշի աչքին շիւղը տեսնող, բայց
իրենցին գերանը չի տեսնող կարգ մը պոռո-
տախօս վարիչներուն ականջները... քերուին:

Հրապարակէն քաշուած Հնչակեան (նա-
զարբէկ) կուսակցութիւնը՝ իրմով կէս տու-
զինան (*) թամամցնող միւս կուսակցութեանց
երկպառակութիւններէն օգտուելու նպատա-
կաւ նպէն. հրապարակ եկաւ իր օրկանովը:

Հարկ չէ ըսել թէ ալ այս անգամ տե-
ղի ունենալիք կուսակցական կատաղի մրցում-
ներու շնորհիւ ազգը առօք փառօք բոլորովին
գերեզման կիջեցնենք:

Քըճրաղաբ

Զրոյց կը շրջի թէ Գ. աստանդաշիւի
հոս պաշտօնավարութեան տարեգարձին առ-
թիւ իւր գրական յոբելեանն ալ պիտի տն-
ուի ընդ բարձր նախագահութեամբ Տօթթօն
անտոռա պօշաւոր մանթարաբանին:

Անշուշտ յարգելի նախագահը պիտի
հաճի ժամանակին լրագրաց միջոցաւ տեղե-
կացնել ամբողջ հայութեան՝ որպէս զի ազգը
մահրում չեղլայ եւ իւր երախտագիտութիւ-
նը մատուցանէ նմանը չի գտնուած աս
պէրկուզարին:

Բեքիեյի

Քամաթբա

Տեղւոյն Ընթերցասիրաց ընկերութեան
Ընդհ. ժողովոյ ատենագրութեան տետրակնե-
րը գործոն անդամներէ մէկուն զօլթուգը մը
տած, զօլթուգը գօլթուգ ու զբօսարանէ ըզ-
բօսարան պտոյտի ելաւ:

Հաճի Բանարօ

Մէկ բանի միւսիւնն էր նոյ. 2ի գիշերը թա-
ղապետութեան պարտէզին մէջ գանաբէնե-
րուն վրայ երկնցած՝ աստղին երեւումին սպա-
սեցին մինչեւ լոյս, ու վերջապէս առուօտ-
եան ցօլին շնորհիւ տեսան սարսափելի տե-
սակէն... հարբուխեան գիսաւորը:

(*) Հնչակեան, Դրօշակեան, Վերակաղ-
մեալ Հնչակեան, Արմենական, Միութե-
նական և Մահադաւանագեան:

Մէկ քանի աներկիւղ-՞ քաղիքաւեաներ ալ գացին ծովեզերքը ցամաք քաշուած մեծ մապոննաի մը մէջ նստեցան, որպէս զի եթէ երբէք երկիրս ջուրին տակը իջնէ, իրենք խապախի պէս երեսը մնան:

Երեքշաբթի առտու բոքոնա թէսպինօ ֆանաթիքօսեանք աշխարհի չի կործանելուն համար աբաղաղներ մատաղ կարեցին ու իրարու աչքի լոյսի պտտեցան:

Նոյն օրը ֆաշասիրտեան Զէնոն աղան գիսաւորին վախէն մինչեւ իրիկուն գլուխը վերմակէն դուրս չի հանեց:

Ուլիցա Չըգմազիգա

Հարսնիքի մը մէջ ուսանող պարոն մը իր Պատմութեան դասագիրքը 3 դրուշի ծախեց ու այն դրամով էլլէնձէ խապախի կուտ առած՝ օրիորդներուն բաժնեց:

Բէքին (Չինաստան)

Վերջին անգամ քաշուած վիճակահա նութեան Ա. մեծ պարգեւը «Թէօ-եռուտիչի-չօգ-չօգ» անուն անձնական գրամատուներն ելաւ:

Եէտօ (Ճաբօն)

Նոյն վիճակահանութեան երկրորդ մեծ պարգեւն ալ մաջրաբաղաքին «Խըվլըօ-զըվլը-րօ» գրամական հաստատութեան տիրէթօրի պաճաւնախին պղտիկ տղուն վիճակեցաւ:

Սօֆիա

Նալպանտ Հասան աղային յանձնարարուեցաւ՝ իրամը զրպարտիչ ճենճոտին տեղւոյս թըղ թակցին տրուած կէս քիլէ գարին մէկ քիլէի վերածել, որովհետեւ գիշերները երկնալուն պատճառաւ կէսով չի գոհանար կոր:

Տան մը մէջ.

— Տեսա՞ր, Միսաք աղա, չէիր ուզեր կոր հաւատալ. նայէ՛, երկտըղը Բօրթուգալին զարկեր է:

— Աստար բաթուղն բօրթուգալի մը համար է եղեր. հոգս, աս տարի ալ թող չի կերած ըլլամ.

— Ի՞նչը չի կերած կըլլաս կոր.

— Ասլը հոս եկածնուս ի վեր սանկ չէնք շնորհք եաֆայի խոշոր բօրթուգալ մը կերած ունի՞նք մի. . .

— Քա ի՞նչ կըսես կոր, եաֆան մէֆան իրա՞յ մի՛ խառներ. ասիկա քու գիտցած բօրթուգալդ չէ՛. մենք քաղաք մըն է որ պաթմիշ է եղեր:

— Աս ըսած տեղդ մեզմէ ինչտար հեռու կիյնայ, գիտե՞ս:

— Ձէ, ի՞նչ կայ որ:

— Ըռահաթ 8—10 օր քշելու է:

— Ատկէ ի՞նչ կեցայ.

— Տարուան մը ճամբայ հեռու տեղէ զարկած ըլլար նէ պիլէ՛ աշխարհ թէքմիլ կը կործանէր:

— Էյ հիմա Բօրթուգալին զարկած չէ՞ պիտի ըսենք.

— Վաղ անցիր, կնիկ, վաղ անցիր, չիւրիւկ իլիմանի մը պիլէ գալած չէ, ո՛ւր կը մնայ բօրթուգալին:



Կինը — Աս գիշեր կէնէ բէք նէ-չաթսըղ կերեաս կոր.

Այրը — Ձգէ հոգիդ սիրես, մէկը գիտես մէկը չիյտես. առուտուրները ասանկ երթայ նէ որին վրայ նէչաթ կը մնայ:

— Ույ ճանլմ Գրաբոս աղա, աս վիրա օրթալըլը քէստտ է կըսես:

— Էյ սո՛ւտ է մի ըսածս.

— Աման դուն ալ, ատիկա արթըխ խույ մըն է. քովի Զարպանէլեան Աւետիս աղան ալ ամեն օր քիչ շատ առուտուր կընէ ամա, վիրա կուլայ, փառք քեզ Աժ՝. մը չըսեր. իրեն ալ հարցունես նէ կըսէ քի, «եախաս փառք քեզ Աստուած պիչիմի ըլլալուն, ալ ի՞նչ հարկ կայ կրկնելու»:

— Էյ իշթէ ադ թօհաֆ բան:

— Հա եա թօհաֆ բան. դուն ալ թըպիւր անոր պէս կըլլաս կոր, ավուճով վաստկիս նէ՛ կէնէ չեմ վաստկիր կըսես, չիւնքի խուլու խուլունտան վաղ կէչմէդ:

դուռը զարնէ, էմսի տաք աղբիւրները առաջին անգամ երբ զինքը դիմաւորեցի երեսնայեկու անգամ չկրցաւ համարձակիլ, բայց իւր իմ վրայ անհուն եւ անկեղծ սէր մը ունենալը քաջ գիտեմ:

Բժի. — Գեղի բան մը ըսե՛ր էր առաջուց. խօսք մը բացած է:

Գլէ. — Թէպէտեւ անգամ մը հետս խօսակցեցաւ, բայց ամօթխածութենէն չի համարձակեցաւ իւր սիրուն վրայ խօսք բանալ. ուստի քանի մը անգամներ մօրաքոյրս կանչել տուէր էր խնդիրը տնոր բանալու համար:

Բժի. — Եւ մօրաքոյրդ գէմ չի կեցա՞ւ:

Գլէ. — Ընդ հակառակը օգնեց մեզի:

Բժի. — Մօրաքոյրդ ալ առաջին աստիճանի խենդ մըն է եղեր. անշուշտ օր մը զինքը իմ ներքին և արտաքին կանոնացոյց տրամադրութեանցը կենթարկեմ:

Գլէ. — Ինչո՞ւ սիրելի հայր իմ, մօրաքոյրս խենդ պիտի ըլլայ, Մ. Ֆրանսուայի համոր ձեզի բերած տեղեկութիւններէն դուք ալ գոհ եղաք. միթէ մոռցաք անո՞նք:

Բժի. — Գնա դա թշուառական ցընդած պառաւը ինծի կանչէ:

ՏԵՍԻԼ Գ.

Նոյնք Մարիէթ

Մար. — Կառքերնիդ պատրաստ է տէր իմ:

Բժի. — Աղջիկս. եթէ կուզես ինձ մըտիկ ընել, մոռցի՛ր այդ երիտասարդը, մոռցի՛ր. ու ուրիշ մը գտնել նայէ:

Գլէ. — Ոչ, հայր իմ ոչ, չեմ կրնար զինքը մոռնալ:

Բժի. — Թէ որ հրամանիս չհնազանդիս, ետքը պիտի զղջաս, ահա այսչափ հիմա գլխարկս տուր:

(Շար.)

Մահճուպիյէթին միսեաւարդ

Գօմէտի պիր բէրտէ

Բօսթա իւճրէթի պիղէ այիտ օլարագ

Փիյ 20 սանթիմ:

Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

Մեղֆ և Ապաշաւ

Պոլսական կեանքէ բաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գին 60 սանթիմ: Դիմել խմբագրութեան:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տիար Յ. Կ. Պօնճուգեանի պատկերազարդ Գերական — Ընթերցարանը: Գին 60 սանդիմ. վարժարանաց համար 100ին 15 չեղջ:

Դիմել սա հասցէսով

J. G. BONDJOUKIAN VARNA

Մ. 2.

ԹՈԹՈՎՍՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, Զարպհանէլեանի գրատունը, Վլարնա:

Թէ աղգային թատերախաղեր և ժէ հւրոպական լեզուներէ հայերէնի թարգմանուած տպեալ կամ անտիպ թատրերգութիւններու կատակերգութիւններու պէտք ունեցողները դիմելու են խմբագրութեանս:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печантица Взаимность — "Варна".